

կողմից այդ մելիքությունների իրավունքների ժանաչման շրջան,  
 ք/հայ-մահմեդական, վերոհիշյալ մելիքությունների միջև եղած տա-  
 րածայնությունների ու գծտությունների սրման և Փանահ-խանի գլխավո-  
 րած թյուրքական ցեղերի կողմից քաղաքական իշխանության զավթման շըր-  
 ջան՝ որպես հետևանք շահական Պարսկաստանի թուլացման,  
 գ/ Հայ-մահմեդական-ռուսական. Ղարաբաղը 1813 թ. Ռուսաստանին  
 միացվելուց հետո այնտեղ պահպանվեց խանական վարչա-քաղաքական իշխա-  
 նությունը, որով ցարական կառավարությունն իրավականորեն ժանաչեց և  
 օրինականացրեց այն, սակայն հետագայում, սկսած 1822թ., հաշվի առնե-  
 լով խանական իշխանության անուսալիությունը, այն կազմալուծեց և  
 սկիզբ դրվեց ռուսական վարչա-քաղաքական կառուցվածքին հատուկ օրենք-  
 ների տարածմանը:

### Ե.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԱ

#### ,,ՍԱՆՂ" ԲԱՌԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾԻՍԱ ՊԼՇՏԱՄՈՒՆ- ԲԱՅԻՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

1. Հայերեն ՍԱՆՂ բառը փաստորեն չի ստուգաբանված: Դրա հայկա-  
 կան հոմանիշները փոխառյալ բառեր են. ԱՆԿԱՆ /ԱՆԳԱՆ ,սանդ, հավան''  
 < առբ. aggānā ,կուծ, ջրաման'', ՀԱԻԱՆ ,սանդ'' < պլ. hāvan  
 ,սանդ'', որոնք Լազարոն իբր զրադաշտական պաշտամունքի առարկա  
 Հայաստան մտած է համարում: Մորթաղ ,սանդ, հավան'' < Լատին.  
 mortarium ,սանդ, հավան'':

Սանդը կենցաղային գործածության կարևոր առարկա է, աշխատանքա-  
 յին գործիք և բուն հայերեն անվանման քացակայությունը կամ հավանա-  
 կան բուն հայկական անվանման ստուգաբանական-մոտիվացիոն աղբյուրների  
 մթազնվածությունը թույլ է տալիս մտորելու այդ իրույթի և դրա ան-  
 վան հետ կապված արգելանքի /տաբու/ մասին:

2. ՍԱՆՂ բառի հնչունական կաղապարը, ինչպես նաև կանանց գոր-  
 ծընեության ուղորտի հետ առնչվելը և սննդի ու պողաքերության, հետե-  
 վաբար նաև մայր-հողի ու նրա ընդերք-հանդերձյալ աշխարհի հետ պաշ-  
 տամունքային-խորհրդանշական կապի հնարավորությունը թույլ են տալիս

այդ բառի ստուգաբանության որոնումներն սկսել ՍԱՆԻ-ՍՊԱՆԻ-ՍԱՆԴԱՐԱՄԵՏ  
 -ՍՊԱՆԴԱՐԱՄԵՏ շարքում՝ /հմտ.Հր.Ամառյան, ՀԱՔ, Գ.3, էջ 259-261,  
 172-173/: Համեմատող վերջին երկու բառի ստուգաբանությունը հայտնի  
 է՝ դա փոխանված պահլ. *spandāramat* ,,երկրի ոգի՝ ավեստ. *spənta-*  
*-ārmaiti*-ն է; որի բառակազմական բաղադրիչներից առաջինը՝ *spənta-*  
 ,,սուրբ՝, երկրորդը՝ *ārmaiti* ,,իմաստություն՝ է նշանակում: Ավե-  
 լորդ չենք համարում մեջբերել նշված տեղից՝ ,,սրանով նշանակում էր  
 զրադաշտական կրօնի մեջ շատ յարգուած մի ոգի, երկրի Ոգին, որ Արա-  
 մազդի աղջիկը կամ հարսն էր և որի պահպանութեան տակ էր գտնուում Եր-  
 կիրը: Դարձել է նաև մասնուն, իբր համապատասխան յունիսի, որից փո-  
 խառնել է ասոր. *spandarmad* նոյն նշ.-Հիւբշ.թէև Պարսից և Իեթա-  
 նոս Հայոց մէջ գործածուում էր նշանակելու՝ համար աշխարհիս մաքուր և  
 Ինագանդ ոգին, բայց քրիստոնեայ հայոց մէջ բոլորովին Իակառակ նշանա-  
 կուութիւն ստացաւ. այն է ,,դժոխային անդնդոց թագաւորութեան շար ոգին՝  
 -Էմին, Ասողիկ, Կոստանեան /հմտ.ԱՄ, ՀԱՔ, Կ, 172-173/

3. Սանդարամետ /Սպանդարամետ-ն ըստ երևույթին պահլավերենից  
 փոխանված բառի զուտ նշյունական տարբերակը չէ, այլ ունի նաև ի-  
 մաստային տարբերակում:

Համենայն դեպս, հայ. սանդա-/սպանդա < պհլ. *spanda-* հատվածն  
 ունի ծագումնաբանական բացարձակ զուգահեռներ /նույնաբանություն,  
 իզոգլոս/ մեր ցեղակից մյուս լեզուներում՝ ավեստ. *spənta* ,,սրբա-  
 զան՝, լիտ. *šveñtas* պրուս. *swent-* նույնը, լաշ. *svinēt*  
 ,,սրբագործել, տոնել՝, Գ.սլավ. *svęti* ,,սուրբ՝, ռուս. СВЯТОЙ  
 ,,սուրբ՝: Ստոեմ լեզուների սահմաններում այս բառարմատը ձեռք է  
 բերել պաշտամունքային եզրաբառի արժեք, որը քրիստոնեության մուտքի  
 Իետ վերաբծեբավորվում է, քրիստոնեանում, այսինքն՝ դառնում քրիստո-  
 նեական զաղափարախոսության Իմնական Իակացություններից մեկի բա-  
 ցարձակ անունը:

4. Ստոեմ լեզուների նյութի Իման վրա կարելի է վերականգնել  
 \**syent*<sup>(h)</sup> օ- ընդհանուր նախածուր, սակայն լիտվերեն բառասկզբի բաղաձայ-  
 նի որակը ենթադրել է տալիս ընդհ. Գ.-Ե. \**kyenti* \**kyen-t*<sup>(h)</sup> օ-, այսին-  
 քըն, որ կենտում լեզուներում պետք է սպասել ետնալեզվային խուլ բը-  
 մայնացող պայթականի՝ \**k*-ի Գ.-Ե. բարբառային արտածումները: Կեն-  
 տում լեզուների սահմաններում այս բառարմատը չունի այդքան բացարձակ

եզրաքառային իմաստ. հմտ. լատ. canto , ,երգել' , ,իսթ. šipanti  
 , ,զոհել, մատղ անել' > հայ. սպանդ, սպանանել, լուվ. šantaš  
 , ,որոտի աստված' , նաև šant- , ,բարկացած, զայրացած' > հայ.  
 շանթ/շանդ, հուն. ὁ καρδός , ,աչքի անկյուն, աչք, տեսողություն' ,  
 τό χείλος , ,խորք, ընդերք, թաքուտ' , ἡ καρδία «բզեզ» , "макс-  
 ская мушка" , τό καρδία ριον "ափս" , ὁ κάλυκρος 'Ափսի լեզվի տ-  
 կի սև լաբա-նշան, , լատ. cantatrix , ,երգչուհի, կախարդուհի' և  
 այլն: իմաստային դաշտի այսպիսի առերևույթ անսահմանափակությունը,  
 արտաքնագես կամայական տեսք է տալիս այդ արմատի հնչյունական առու-  
 մով օրինավոր ժառանգների թվարկմանը:

Բանն այն է, որ այստեղ գործ ունենք բառակազմական առումով չա-  
 փազանց բեղմնավոր հ. - և. \*key- , ,խփել, հարվածել' > , ,փշրել, մանրել,  
 շատցնել' , , ,հետք թողնել, բեղմնավորել' , ,ցուլց տալ, լուսավորել,  
 տեսանելի դարձնել' - , ,տեսնել, աչքով տալ' , ,զոհել, սպանել  
 սրբագործել' ... իմաստների հետ:

6. Ստանձ լեզուների սահմաններում /որոնց թվին է պատկանում և  
 հայերենը, ուր հնչյունական կանոններով սանդ , ,հաւան' և սանդա-  
 , ,սուրբ' բառերն իրանական միջնորդությունից էլ անկախ կունենային  
 նույն տեսքը /այդ արմատաբառի , ,սուրբ' իմաստի հետ կապվելը,  
 հատկապես ոչ քրիստոնեական ոլորտում , ,սուրբ հողի, սուրբ մոր -  
 մայր հողի' հետ մշտապես առնչվելը՝ մի կողմից, մյուս կողմից՝ ամա-  
 նեղենի, տարբեր խոռոչավոր առարկաների, քարանձավների, ծառափշակների  
 հետ իզական սեռի, մայրություն և ընծայաբերման հետ կապված ոգու-դիցու-  
 հու պաշտամունքի մեզ հայտնի մնացորդները հուշում են; որ ԱՆՆԻ-ն  
 այդ ոգու՝ պաշտամունքի հետ սերտորեն առնչվող հատկանիշներից է, եթե  
 ոչ զլխավորը: Համեմատելով հնդեվրոպական մյուս լեզուներում եղած  
 սանդի, ինչպես նաև մեծագույն հավանականությամբ՝ տարածքա-ժամանա-  
 կային ծիսական տարբերակներում դրա փոխակ-խնոցու անուններն ու ի-  
 րերեն ձևերը, անունների ստուգաբանական հենքը, կարելի է հետևյալն,  
 որ սանդ գործիքին, որպես մշակույթի հնագույն մի նվաճման կարող էր  
 տրվել ԱՆՆԻ մի կողմից հարվածային աշխատանքի հետ կապված գործիքի  
 անմիջական-բնական, մյուս կողմից էվֆեմիստական անվանումը: